ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՂԵԿԱՎԱՐ

N 01/16787-20

«03» 11 2020թ.

0047 ՀՀԵրևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53, 65-03-05
Էլ. Փոստ՝ info@hlib.am

ՈՐՈՇՈՒՄ N 0223

2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-ԻՆ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, և հաշվի առնելով ՀՀ առողջապահության նախարարության 2019 թվականի օգոստոսի 9-ի թիվ 22.1/131119-19 գրությամբ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին (այսուհետ՝ Տեսչական մարմին) ներկայացված ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկային ծառայության տեղեկատվական բազայում առկա 2019 թվականի հուլիս ամսվա ներմուծման տվյալները, Տեսչական մարմնի 2019 թվականի օգոստոսի 23-ի թիվ 01/7643-19 գրությունը ուղղված ՀՀ առողջապահության նախարարությանը, ՀՀ առողջապահության նախարարության 2019 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 22.1/15675-19 պատասխան գրությունը, 2019 թվականի հոկտեմբերի 23-ին Տեսչական մարմնում հարուցվել է վարչական վարույթ՝ «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 21-րդ հոդվածի 1-ին, 4-րդ մասերի, 23-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ կառավարության «ՀՀ տարածք դեղեր, դեղանյութեր, դեղաբուսական հումք և հետազոտվող դեղագործական արտադրանք ներմուծելու և ՀՀ տարածքից արտահանելու, ներմուծման կամ արտահանման նպատակով փորձաքննության իրականացման կարգերը և անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանելու,

ինչպես նաև ՀՀ կառավարության 2000 թվականի սեպտեմբերի 20-ի N 581 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 202 որոշմամբ հաստատված կարգի 4-րդ, 19-րդ, 36-րդ, 73-րդ, 74-րդ կետերի պահանջների պահպանումը պարզելու նպատակով:

2019 թվականի հոկտեմբերի 24-ին (RG018238966AM – AG018238966AM, RG018216585AM - AG018216585AM) «ՀայՓոստ» ՓԲԸ-ի փոստային ծառայության միջոցով 2019 թվականի հոկտեմբերի 23-ին հարուցված վարչական վարույթի, վարույթի լսման օրվա, ժամի և տեղի վերաբերյալ հրամանը և ծանուցումը ուղարկվել են «ԱՐԱՏԱՖԱՐՄ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն)՝ ի դեմս տնօրեն Վահե Արամի Հովակիմյանի, Ընկերության գործունեության և տնօրենի բնակության հասցեներով, սակայն առաքանիները հանձնել հնարավոր չի եղել (առաքանիների հետադարձ կտրոնների վրա առկա են եղել 01.11.2019թ-ի «տեղափոխված» և 26.11.2019թ-ի «չպահանջված» նշումները):

Հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը և 4-րդ մասը, 38-րդ հոդվածի 1-ին մասը, և հաշվի առնելով այն, որ Ընկերությունը՝ ի դեմս տնօրեն Վահե Հովիակիմյանի, չի ծանուցվել և չի ներկայացել հարուցված վարչական վարույթին, 2019 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 2571-Ա որոշմամբ հարուցված վարչական վարույթը կասեցվել է՝ վարչական ակտի հասցեատիրոջ չներկայանալու հիմքով:

2019 թվականի նոյեմբերի 14-ին (RG016188343AM - AG016188343AM, RG016188357AM - AG016188357AM), 2019 թվականի դեկտեմբերի 12-ին (RG020689173AM - AG020689173AM, RG020689187AM - AG020689187AM), 2020 թվականի հունվարի 9-ին RG018226441AM - AG028226441AM, RG018226375AM – AG018226375AM) «ՀայՓոստ» ՓԲԸ-ի փոստային ծառայության միջոցով հարուցված վարչական վարույթի, վարույթի լսման օրվա, ժամի և տեղի վերաբերյալ հրամանը և ծանուցումը կրկին ուղարկվել են Ընկերությանը՝ ի դեմս տնօրեն Վահե Արամի

0047 ՀՀ ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ.(374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107

Հովակիմյանի, պատվիրված հասցեներով, սակայն առաքանիները հանձնել հնարավոր չի եղել (առաքանիների հետադարձ կտրոնների վրա առկա են եղել 20.11.2019թ-ի, 18.12.2019թ-ի և 15.01.2020թ-ի «տեղափոխված», 16.12.2019թ-ի, 15.01.2020թ-ի և 11.02.2020թ-ի «չպահանջված» նշումները):

Այնուհետև փոխվել է Ընկերության տնօրենը (հիմք՝ Ընկերության պետական ռեգիստր (գրանցման համար՝ 55.110.1061402, գրանցման ամսաթիվ՝ 01.03.2019)), որից հետո 2020 թվականի հունիսի 23-ին (RG023031479AM - AG023031479AM, RG023031465AM - AG023031465AM), «ՀայՓոստ» ՓԲԸ-ի փոստային ծառայության միջոցով հարուցված վարչական վարույթի, սույն թվականի հուլիսի 2-ին կայանալիք լսման վերաբերյալ հրամանը և ծանուցումը պատվիրված հասցեներով կրկին ուղարկվել են Ընկերությանը: Սակայն Ընկերության գործունեության հասցեով ուղղարկված առաքանին (RG023031479AM - AG023031479AM) Ընկերության տնօրեն Հովհաննես Մարտիրոսյանը ստացել է հուլիսի 3-ին, իսկ Ընկերության տնօրենի բնակության հասցեով ուղղարկված առաքանին (RG023031465AM - AG023031465AM) հանձնել հնարավոր չի եղել (առաքանու հետադարձ կտրոնի վրա առկա է եղել 29.07.2019թ-ի «տեղափոխված» նշումը):

2020 թվականի հուլիսի 29-ին (RG024824205AM - AG024824205AM, RG024824214AM - AG024824214AM) և սեպտեմբերի 4-ին (RG025732117AM - AG025732117AM) «ՀայՓոստ» ՓԲԸ-ի փոստային ծառայության միջոցով վարչական վարույթի, վարույթի լսման օրվա, ժամի և տեղի վերաբերյալ հրամանը և ծանուցումը կրկին անգամ ուղարկվել են Ընկերությանը՝ ի դեմս տնօրեն Հովհաննես Միասնիկի Մարտիրոսյանի, պատվիրված հասցեներով, սակայն առաքանիները կրկին հանձնել հնարավոր չի եղել (առաքանիների հետադարձ կտրոնների վրա առկա են եղել 31.08.2020թ-ի և 11.09.2020թ-ի «տեղափոխված», 05.08.2020թ-ի «բացակա» նշումները):

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ և ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
HEALTH AND LABOR INSPECTION BODY OF THE REPUBLIC OF ARMENIA

0047 ՀՀ ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ.(374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107

Այնուհետև Տեսչական մարմինը 2020 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ 14315-20 գրությամբ դիմել է Մարմաշեն համայնքի ղեկավար Կարեն Արշակյանին՝ խնդրելով պարզել, արդյոք Հովհաննես Միասնիկի Մարտիրոսյանը բնակվում է ՀՀ, Շիրակի մարզ, Մարմաշեն համայնք, գ. Մայիսյան, փողոց 10, տուն 6 հասցեում, թե՝ ոչ:

Տեսչական մարմնի գրությանը ի պատասխան՝ Մարմաշեն համայնքի ղեկավար Կարեն Արշակյանը սույն թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 1528-20 գրությամբ տեղեկացրել է, որ ՀՀ, Շիրակի մարզ, Մարմաշեն համայնքի Մայիսյան գյուղում Հովհաննես Միասնիկի Մարտիրոսյանը հաշվառված չէ և փաստացի չի բնակվում:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե՝ օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումների կամ դրանց կանխման հետ չկապված հարցով իրավիճակի փոփոխման կամ օրենքով նախատեսված այլ հիմքով վերացել է վարչական ակտի ընդունման անհրաժեշտությունը:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը և 3-րդ մասը, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 755-Լ որոշմամբ հաստատված ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանոնադրության 19-րդ կետի 13-րդ ենթակետը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնում 2019 թվականի հոկտեմբերի 23-ին հարուցված վարչական վարույթը կարճել՝ իրավիճակի փոփոխման հիմքով:

2. Սույն որոշումը ծանուցել 2617, Շիրակի մարզ, Մարմաշեն համայնք, գ. Մայիսյան, փողոց 10, տուն 6 և 0097, քաղաք Երևան, Աջափնյակ, Նորաշեն

0047 ՀՀ ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ.(374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107

թաղամաս, 14 շ., 43բն. հասցեներով «ԱՐԱՏԱՖԱՐՄ» ՍՊ ընկերությանը՝ ի դեմս տնօրեն Հովհաննես Միասնիկի Մարտիրոսյանի:

Շնորհակալություն հասանելիության համար՝

Recoverable Signature

X

ՀԱԿՈԲ ԱՎԱԳՅԱՆ

Signed by: AVAGYAN HAKOB 3912770166

ՀԱԿՈԲ ԱՎԱԳՅԱՆ

Սույն վարչական ակտն ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակիցներին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Սույն վարչական ակտը ստանալու օրվանից 2 ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին:

Սույն վարչական ակտը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածով սահմանված ժամկետում կարող է բողոքարկվել վարչական դատարան:

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ և ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
HEALTH AND LABOR INSPECTION BODY OF THE REPUBLIC OF ARMENIA

0047 ՀՀ ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ.(374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107